

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակին, բնույթին ու թարգմանիչներին վերաբերող ուղղակի տեղեկությունները, ինչպես նաև թարգմանական բովանդակությամբ հիշատակարան-հիշատակագրությունները շատ չեն: Այդուհանդերձ, սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու բյուզանդական մատենագրի հարուստ ու բազմաժանր գրական վաստակի հայերեն թարգմանությունների տեղի, ժամանակի, բնույթի, թարգմանիչների ինքնության մասին:

Պահպանված տեղեկությունների քննությանն անցնելուց առաջ ավելորդ չէ նախ անդրադառնալ այն հարցին, թե այդ ուղղությամբ ինչ է կատարվել հայագիտության նախորդ սերնդի կողմից: Սակայն այս առումով ևս մեզր սպասելիքները մեծ չեն: Վարդ աշյն պարզ պատճառով, որ Գր. Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունները, անշա՛նջան բացառությամբ, այսօր էլ անտիպ են, պահպանվում են ձեռագիր վիճակում և, բնականաբար, դրանց ուսումնասիրության գործը կապված է ոչ քիչ դժվարությունների հետ: Ասվածի հավաստումն է այն իրողությունը, որ հայագիտության մարզում գոյություն չունի բյուզանդական մատենագրի գրական ժառանգությունն ամփոփող-գնահատող որևէ հոգված կամ հաղորդում: Ուստի պիտի մտածել, որ հայագիտական գրականության մեջ եղած Գր. Նյուսացու կյանքի ու գործունեության, նրա ճանրերի ու թղթերի մասին ձեռած նկատառումներն ու առանձին թնահատության օրինակները արդյունք են ոչ թե այս կամ այն խնդրի մասնավոր հետազոտության, այլ, առանց բացառության, մակաբերվում են հարակից հարցերի քննության առիթով:

Այդուամենայնիվ, որո՞նք են եղած ընդհանրացումները: Նոր հայկազյան բառարանագիրքները ձեռքի տակ ունեցել են Գր. Նյուսացու հայերեն թարգմանությունների յոթ անուն գործ և զանազան քաղումներ կատարելիս, բառարանագրության հնարավորության սահմաններում, արել են նաև բյուզանդական մատենագրի այս կամ այն երկի թարգմանության ժամանակին ու բնույթին վերաբերող արժեքավոր դիտողություններ: Այսպես՝ բառարանագիրքների բնութագրմամբ Գր. Նյուսացու «Յաղագս երգոյ յերգոցս» և «Դրուատի սուրբն Ստեփանոս» ընդարձակ գործերը հին թարգմանություն են՝ «միջակ ոճով»¹: Նույն «հին թարգմանութիւն» ձևակերպմամբ է բնորոշվում նաև «Ի սուրբ Թեոդորոս» ներբողը²: Մի փոքր այլ է «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն» գործի հայերեն թարգմանության բառարանագիրքների բնորոշումը. «Թարգմանութիւն ըստ նիւթոյն՝ տարբեր ոճով հելլենականաւ ի Ստեփաննոսէ Սիւնեցոյ ի սկիզբն Ը դարու»³: Բառարանագիրքները կարծում են, որ նույն ոճով, թերևս «առասել հին թարգմանութիւն է» բյուզանդական մատենագրի «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» ճառը⁴:

Գր. Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների լավածանոթ Գ. Զարբհանալյանի համոզմամբ բյուզանդական մատենագրի

¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԶԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 16:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

«Խաւար ինն երանութիւնսն» ընդարձակ ճառը նույնպէս պիտի դասել «կրտսե-
րագոյն թարգմանչաց» թարգմանությունների շարքը⁵:

Շատ ավելի ընդհանրական է Հ. Տաշյանի ձեռնարկումը. հանդամանո-
րեն քննելով Կեղծ Կալիսթենեսի «Վարուց Աղեքսանդրի» թարգմանության
բնութիւնն ու լեզուն, նա գրում է. «Մասնաւոր մտադրութեան արժանի է այն՝
որ Կալիսթենեսի լեզուն շատ նմանութիւն ունի ինչպէս Խորենացոյ Պատմու-
թեան, նոյնպէս նաեւ Փիլոնի, Նիսացոյ եւն թարգմանութեանց լեզուին»⁶:

Կարապետ Եպիսկոպոսը «Կնիք հաւատոյ» ժողովածուի առաջաբանում
անհրաժեշտ է գտնում արձանագրել հայագիտության մեջ իրավացիորեն տա-
րածում գտած այն իրողութիւնը, որ «Յաղագս Կաղմութեան մարդոյ» երկը
թարգմանվել է Ստ. Սյունեցու ձեռքով, Տաշյանի առաջադրած 716 կամ
717 թթ.⁷:

Ա. Զամինյանը ծանոթ է Գր. Նյուսացու գործերի հայերեն թարգմանու-
թյունների եղած հատվածական հրատարակութիւններին, որոնց հիման վրա
ենթադրում է, որ «Նիսացոյ գրութեանը թարգմանութեան են Զ դարու
մէջ»⁸:

Ն. Ակինյանը բնորոշումը նույնպէս ընդհանուր է և չի քիչում Գր. Նյու-
սացու մատենագրական վաստակի հետ կապված որեւէ խնդրի մասնավոր
քննութիւնից: Խոսելով հունարան թարգմանութիւնների մասին, հետազո-
տողը Դավիթ Անհաղթի Սահմանքի, Եվսեբիոսի Քրոնիկոսի, Աղեքսանդրի
Պատմության շարքում հիշատակում է նաեւ Փիլոնի, Պղատոնի, Նյուսացու և
Նաղիանդացու անունները⁹:

Հայագետների նմանօրինակ ընդհանրացումների հիմքը, այդուհանդերձ,
պահպանված մատենագրական-ձեռագրական աշխ ուղղակի կամ միջնորդա-
վորված վկայութիւններն են, որոնք հնարավորութիւն են տալիս բյուզան-
դական մատենագրի գործերի հայերեն թարգմանութիւնների հետ կապված
հարց արծարծել: Սյս առումով, չափազանց արժեքավոր է Ստ. Օրբելյանի
(1245—1305) հաղորդումը VIII դ. մատենագիր Ստ. Սյունեցու (680—735)
կանոնավոր ուսումնառութեան, պատրաստութեան ու թարգմանական գոր-
ծունեութեան մասին. «Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն և
թագաւորական սեղանոյն կենառի. և ձեռնառութեամբ նորին թարգմանէ
զգեղեցիկ զիրան սրբոյն Դիոնիսիոսի. և զնէ ինքն դժուարագոյն և խրթին
բանիցն լուծումն թան առ բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի
Նիսացոյ զԲնութեան և զԿաղմութեան...»¹⁰: Սույն տեղեկութեան խսկութեան
շուրջ արդարացիորեն որեւէ կասկած չի կարող լինել այն պարզ պատճա-
ռով, որ Ստ. Օրբելյանը հրաշալի գիտեր Ստ. Սյունեցու կյանքի ու գործու-
նեութեան մանրամասները քա մանաւրդ ստույգութեամբ վերապատմում է
դրանք: Պահպանված երկու տասնյակից ավելի ձեռագրական հիշատակու-
թյունները ևս նույնն են վկայում¹¹:

5 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնաց, Վե-
նետիկ, 1889, էջ ԻԵ:

6 Ցակովբոս Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեսի վարուց Աղէք-
սանդրի, Վիեննա, 1892, էջ 209, հմմտ. էջ 211—212:

7 Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, հրատարակութիւն Կարապետ Եպիս-
կոպոսի, Ե. էջմիածին, 1914, էջ XVIII:

8 Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, հ. Ա, Նոր-Նախիջեան, 1914,
էջ 90:

9 ՏԵՄ Ն. Ակինեան, Դասական հայերէնը եւ վիեննական Միքիթարեան դպրոցը, Վիեն-
նա, 1932, էջ 168:

10 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբէլեան արքեպիսկոպոսի
Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135:

11 Ձեռագրական նյութի համեմատումն ու դասդասումը ցույց են տալիս, որ Ստ. Սյու-
նեցին առհասարակ լավատեղյակ է եղել «երեք մեծ կապաղովկացիների» մատենագրական

Տվյալ պարագայում մեր ասելիքը վերաբերում է թարգմանության խնդրում գործակից ունենալ-չունենալուն, այն հարցին, թե՞ Ստ. Սյունեցին մեռա՞նք է թարգմանել Գր. Նյութագու աշխատանքը, թե՞ աշխատակից է ունեցել հիշյալ 'Իսկիթ' հյուպատոսին։ Այս առումով հայագետների կարծիքը միասնական չէ։ Նոր հայկազյան բառարանագիրների պնդմամբ, Նյութագու նշված գործի թարգմանիչը Ստ. Սյունեցին է, և գործակցության խնդիր չկա¹²։ Նույն կարծիքին են Գ. Զարբհանալյանը և Հ. Տաշյանը¹³։ Սակայն կա նաև ուրիշ տեսակետ, որի համաձայն Ստ. Սյունեցին «Յաղագս կազմութեան մարդոյ» գործը «կը թարգմանէ գործակցութեամբ Դավիթ անունով մէկու մը»¹⁴։ Անհրաժեշտ է նկատել, որ նման եզրակացության հնարավորություն է տալիս պատմիչի հաղորդումը, ուր պարզորոշ ասված է, որ Ստ. Սյունեցին Դավիթ հյուպատոսի «ձեռնտուութեամբ... թարգմանէ... զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիսացոյ»։ Ձեռնտուութիւն բառը նոր հայկազյան բառարանագիրների բացատրությամբ նշանակում է ձեռնու լինելը, ձեռնկալութիւն, օգնութիւն, սատարութիւն, նպաստ¹⁵ և այլն։ Բառիս առաջադրված իմաստները միանգամայն ճիշտ են արտացոլում պատմիչի հաղորդման էությունը՝ Ստ. Սյունեցին իր նպատակադիր թարգմանական գործունեության տվորտում անհակ չէ։

Բարեբախտաբար Ստ. Օրբելյանի հաղորդումը իր տեսակի մեջ միակը չէ։ Համարենույթ սկզբնաղբյուրների որոնումը ցույց է տալիս, որ կան բավարար կոմպաններ մտածելու, որ Ստ. Սյունեցու թարգմանական գործունեության ոլորտը սոսկ Դավիթ հյուպատոսի օժանդակությամբ չի սահմանափակվում։ Մինչդեռ պարզվում է, որ Մխ. Այրիվանեցու (1222—1291) մի երկում պահպանված տեղեկության համաձայն «Յաղագս կազմութեան մարդոյ» գործը, ինչպես նաև հոնարեն զանազան ուրիշ բնագրեր հայերեն թարգմանելիս Ստ. Սյունեցուն աշխատակցել է թարգմանական պատրաստությամբ օժտված հմուտ գործընկեր, Այրիվանքի միաբան, իր խոյ տեսմանակից-հասակակից «Գրիգոր անուն» մատենագիրը։ Ահա թե ինչ է գրում Մխ. Այրիվանեցին Ստ. Սյունեցու առաջադեմ գիտության ու գործունեության մասին խոսելիս. «էր եւ ընկեր սորա ի նմին քաղաքէ քհայ. ոմն Գրիգոր անուն, ի սր. ուխտէն Այրիվանաց. Երկոթին սորա ընտիրք և զարմանալիք, յառաջադէմք ի գիտութիւն. դրոց եւ յարունաստ երաժշտականութե.։ Սորա միաբանեալ գնացին իմաստասիրաց յԱթէնս և ուսան զամ. սահմանս փրկիսոփայութե. իմաստասրտաքնոց, և քաղատեղեակք եղեն ածաշունչ. բնագրեանց և մեկնչաց։ Անտի եկեալ, եկին ի թգրաբնակ քաղաքն Կոստանդնուպոլիս...։ Անդ գտին նոքա զգիրսն Դիոնիսիոսի Արիսպագացոյ... թարգմանեցին գնա ի յունականէն ի հայ բարբառ...։ Գտին և ի նմին քաղաքի զբաղմամաստ դիրսն Գրիգորի

վաստակին և Գր. Նյութագու հիշյալ գործից բացի թարգմանել է Բ. Կեսարացու «Յաղագս ձայնից» աշխատանքը. «երանելոյն Բարսիլի յաղագս ձայնից, թէ ուստի իցեն կամ յորմէ գտան, զոր թարգմանեաց Ստեփաննոս. փրկիսոփա, գի նա եղև երաժիշտ և հմուտ ձայնից ամենայն կենդանեաց և բաժանեաց զձայնս ի մասունս» (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 1267, էջ 341ա)։ Հրատարակությունը տե՛ս Արարատ, 1894, էջ 256, հմմտ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ժԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 1388; Հ. Անասյանը «Յաղագս ձայնից» երկի հեղինակային պատկանելության շուրջ կասկած ունի (տե՛ս նույն տեղում)։

¹² Տե՛ս ՆՀԲ, հ. Ա, էջ 16։

¹³ Գ. Զարբհանալյան, Եջվ. աշխ., էջ 371, 3. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի վիեննա, Վիեննա, 1895, էջ 45, 681։

¹⁴ Հեղինարանութիւն եւ հեղինարան թարգմանիչ հայկական լեզուի (տե՛ս Բաղմովէպ, 1875, էջ 121), հմմտ. «Յաղագս կազմութեան մարդոյ», Գր. Նիսացիի, թարգմանուած Է Դավիթ Հիւպատոսի հետ» (Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 113)։

¹⁵ ՆՀԲ, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 154։

Նիւսացոյ, որ վս. բնութե. մարդոյ եւ կազմութե. կարգեալ էր, և զայն ևս թարգմանեցին»¹⁶:

Վկայակոչված քաղվածքում երկրային, թեական ոչինչ չկա. ամեն ինչ ասված է շատ պարզ ու որոշակի՝ «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքները հունարենից հայերեն են թարգմանվել Ստ. Սյունեցու և Գրիգոր անուն» թարգմանիչ-մատենագիրների համատեղ ջանքերով, Կոստանդնուպոլսում: Փաստորեն Մխ. Այրիվանեցու հաղորդման նորը կամ տարբերությունը Ստ. Օրբելյանի նույնաբնույթ տեղեկությունից այն է, որ իբրև Գր. Նյուսացու թարգմանիչ հիշատակվում է բոլորովին նոր անուն: Եվ դա միանգամայն հասկանալի է այն պարզ պատճառով, որ նշված թարգմանիչ-մատենագիրների գործունեության հետ են կապվում ոչ միայն Նյուսացու կամ Եմեսացու նմանանուն մեկական գործերը, այլ նաև ուրիշ աշխատանքներ: Իրականում խոսքը ծրագրավորված, որոշակի մշակված սկզբունքներով գործող տեական թարգմանական գործունեություն ծավալելու մասին է, որ, բնականաբար, մեկ-երկու աշխատակից-կատարողների ձեռնարկումներով դժվար էր իրացնել:

Ի լրումն Ստ. Օրբելյանի և Մխ. Այրիվանեցու վերոբերյալ հաղորդումների, ունենք նաև 1227 թ. Գր. Նյուսացու գործերի ընդօրինակության առիթով գրված Սիմեոն Պղնձահանեցու հիշատակարանը, որտեղ նույնպես բյուզանդական մատենագրի գործերի հայերեն թարգմանությունների մասին խոսելիս ընդօրինակողը, շնորհանով թարգմանության մանրամասների մեջ, ևրանք դիտում է մեկից ավելի թարգմանիչների գործ. «աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացոյ... ու բարգիւմանչացն գրած էր...»¹⁷:

Ստ. Օրբելյանի, Մխ. Այրիվանեցու, Ս. Պղնձահանեցու նշված տեղեկությունների ստուգությունը հավաստվում է շատ ավելի հին ու հավաստի վկայությամբ. խոսքը Օրբելյանի և Այրիվանեցու հիշատակած թարգմանիչ-մատենագիր Ստ. Սյունեցու անվամբ պահպանված թարգմանական հիշատակարանի մասին է¹⁸: Ահա այսպիսի տեսք ունի այն Մաշտոցի անվան Մատենադարանի 1260 թ. ընդօրինակված № 469 ձեռագրում պահպանված այդ հիշատակարանը. «ԻՅ-երորդի [=վեցհազարերորդի] Մ-երորդի [=երկերիւերորդի] Ի-երորդի [=քսաներորդի] է-երորդի [=եւթներորդի] արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թույ՝ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, յառաջին ամի թագաւորութեանն Լէոնի, թարգմանեցան գիրքս սրբոյն Գրիգորի Նիւսիա էպիսկոպոսի, ի ստոյգ արինակաց, ի Կոնստանդնուպոլսիս, ի ձեռն Դաւթի հիպատոսի և ի թագաւորական սեղանոյն յանկիւնառի»¹⁹, ի ձեռն Ստեփաննոսի քահանայի և քերդողի, աշակերտի տեառն Մովսէսի՝ Սիւնեաց եպիս-

16 Գ ա ռ ե գ ի ն Յ ո վ ս է փ ե ա ն ց, Մխիթար Այրիվանեցի. նորագիտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 17: Վերոբերյալ հաղորդման Նյուսացուն վերաբերող մասը տե՛ս նաև ն ու յ ն ի՝ Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 181, հմմտ. էջ 253, 375:

17 ՄՄ. ձեռ. № 1013, էջ 241 ր:

18 Ստեփանոս Սյունեցու հիշատակարանը, ինչ խոսք, միաժամանակ կարևոր սկզբնաղբյուր է VIII դարում հայ իրականության մեջ ծավալված գրական-մշակութային իրավիճակի գնահատման առումով: Կասկածից վեր է, որ այն ծանոթ է եղել Ստ. Օրբելյանին. այդ են վկայում բառացի նմանության օրինակները Հմմտ. «Ի ձեռն Դաւթի հիպատոսի և ի թագաւորական սեղանոյն յանկիւնառի» (Ստ. Սյունեցի), «ծանօթացեալ մեծ հիպատոսի մի Դաւթ անուն և թագաւորական սեղանոյն կենառի» (Ստ. Օրբելյան): Մխ. Այրիվանեցու տարբերակը նման ենթադրության հնարավորություն չի տալիս:

19 «Յանկիւնառ»-ի դիմաց այլուր ունենք կենառի, կիւառի, կիւնառի և նման ընթերցումները: 2. Տաշյանի հավաստմամբ կիւնառ տարբերակը շարժէն 1864-ին շատ լավ մեկնած կերեայ Բրոստէ, Ցալտնապէս կը տեսնուի, որ «կենառ» սխալ գրութիւն մը կրնայ ըլլալ փոխանակ «կելար» գրելու, որ է լատինական cellarius բառը...» (Յ. Տաշեան, Մատենագրական մասն ուսումնասիրութիւնք. հետազոտութիւնք եւ բնագիրք, Վիեննա, 1895, էջ 8):

կոպուսի: Յիշեցէք զնոսա ընդարինակողք և փոխեցէք զբանս յիշատակի ի յոյս փրկութեան աշխատողացն և յիշողացդ առ Քրիստոս...»²⁰:

Վերոբերյալ հիշատակարանը զրչական մասնակի տարբերություններով և հետագա ոչ մեծ ընդմիջարկություն-փոփոխություններով հանդիպում է երկու տասնյակից ավելի ընդօրինակություններում: Կա ձեռագրերի մի խումբ, որոնցում այն ընդօրինակվել է նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատանքի ավարտից հետո և Գրիգոր Նյութացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի սկզբնամասում²¹: Այս խրոդությունն էլ հնարավորություն է տվել մտածելու, որ նշված թարգմանական հիշատակարանը «Յաղագս բնութեան մարդոյ» գործի Ստ. Սյունեցու թարգմանությանն է վերաբերում և ոչ թե Գր. Նյութացու հիշյալ աշխատանքին, «մանաւանդ թէ բուն յիշատակարանն Սիւնեցւոյն այս մասին կը վերաբերի և ոչ թէ Նիսացւոյն ճառին»²²: Սակայն Ն. Եմեսացու և Գր. Նյութացու հայերեն թարգմանությունների գրչագրերի, համապատասխան հիշատակարան-հիշատակագրությունների համեմատումն ու դասդաստումը ցույց են տալիս, որ նման ընդհանրացման համար չկան բավարար հիմքեր և ահա թե ինչու:

1. Արսեն Սուքրյանին հավանաբար ծանոթ չէ ձեռագրերի ավելի մեծ թիվ կաղաճ այն խումբը, որոնցում նշված հիշատակարանը ընդօրինակվել է «Յաղագս կազմութեան մարդոյ» գործի ավարտամասում²³:

2. Հայտնի է, որ այլազան պատճառներով նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատանքը միջնադարում վերագրվել է Գր. Նյութացուն, ուստի և պիտի ենթադրել, որ միևնույն թարգմանական հիշատակարանի անհարկի վրկնությունից խուսափելու նպատակով այն ընդօրինակվել է մեկ անգամ, Նյութացու աշխատասիրություն համարվող «Յաղագս բնութեան մարդոյ» երկի վերջնամասում և «Յաղագս կազմութեան մարդոյ» գործի սկզբնամասում:

3. Վերոբերյալ հիշատակարանի ոճից ինքնին երևում է, որ ենթադրվող թարգմանությունները մեկից ավելի են և որ դրանք պատկանում են Գր. Նյութացու գրչին. «թարգմանեցան զիբքս սրբոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիսեայ»:

4. Թվարկված երկու աշխատանքներն էլ հայերեն են թարգմանվել նույն

²⁰ ՄՄ, ձեռ. № 469, էջ 117ա, ձեռ. № 020, էջ 150ա-բ, ձեռ. № 1500, 602ա: Սույն հիշատակարանը պահպանվել է «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքների գրեթե բոլոր ընդօրինակություններում: Այն հրատարակվել է մի քանի անգամ, տարբեր ձեռագրերի հիմքի վրա, ուստի և ոչ միօրինակ տեսքով: Տե՛ս Միքայէլ Չամչեանց, Պատմություն Հայոց, հ. Բ, ի Վենետիկ, 1785, էջ 555, նեմեսիոսի փրկիսոփայի Եմեսացու Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889, էջ 162, Գ. Ջարբեհանյան, նշվ. աշխ., էջ 371, 8. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրությունը, էջ 7, Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 55, Բարգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 593, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, կազմեց Նորայր Պողոսեան, Երուսաղեմ, 1967, էջ 314, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 293, հ. Դ, Երուսաղեմ, 1969, էջ 187, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 838, Լ. Գ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, Վիեննա, 1972, էջ 175, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺՐ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 24—25:

²¹ Տե՛ս ՄՄ. ձեռ. № 6848, էջ 150ա, ձեռ. № 3463, էջ 129բ—130ա, ձեռ. № 6622, էջ 168ա, ձեռ. № 418, էջ 74բ, ձեռ. № 2908, էջ 111ա-բ:

²² Արսեն Սուքրի, Նեմեսիոսի մարդակազմութեան դրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը (տե՛ս Բաղմալէպ, հ. ԼԸ, 1880, էջ 326):

²³ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 463, էջ 80ա, ձեռ. № 466, էջ 181 բ, ձեռ. № 421, էջ 85ա և այլն:

ժամանակահատվածում, միևնույն թարգմանչի՝ Ստ. Սյունեցու ձեռքով, ուրեմն առավել ևս անհրաժեշտություն չկար յուրաքանչյուր գործ առանձին օժտելու նույն բովանդակությամբ թարգմանական երկու հիշատակարանով, մանավանդ որ դրանք ընդօրինակվում էին կողք-կողքի, նույն գրչի ձեռքով, միևնույն ձեռագրում:

Այժմ մի քանի վստաք քննվող հիշատակարանի վրած ընդմիջարկությունների, մասնակի փոփոխությունների և Գր. Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների ժամանակի մասին: Բազմաթիվ ձեռագրերում նշված հիշատակարանի թի շորեքտասաներորդի ընդհանրությունն» արտահայտությունից հետո ունենք ձիակ ըստ հայոսմ թուականին ՄԻԱ՝²⁴ մասնավորեցումը: Մ. Չամչյանը հանգամանորեն քննել է հիշատակարանում վկայակոչված անձանց գործունեության ժամանակագրությունը, անդրադարձել է նաև ձիակ ըստ հայոսմ թուականին» կապակցությամբ և եզրակացրել, որ այն «յայտնի սխալ գրչաց է»²⁵, Միանշանակ է նաև Հ. Տաշյանի կարծիքը՝ «սխալն ակնյայտնի է»²⁶, Նախորդ հետազոտողների պատմարանասիրական ուսումնասիրությունների արդյունքներին իր իսկ նկատառումներն ավելացնելով, Գ. Հովսեփյանը տվյալ խնդիրը ընդհանրացնում է միանգամայն համոզիչ եղանակով. «Արարչության 6227 թուականը հաւասար է Փրկչականի 719 թիւին, որ համապատասխան է Լեւոն Գ-ի եւ Ստեփանոս Սիւնեցու ժամանակներին: Մինչդեռ եթէ հայ ՄԻԱ թուականի վերայ աւելացնենք 553 (Սարկաւադադիր տումարի հաշուով), կը ստանանք 774, որ Լեւոն Գ-ի տարին է: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ... ձիակ ըստ Հայոսմ ՄԻԱ» յետին յաւելումն է, Լեւոն Գ-ի եւ Լեւոն Գ-ի թուականների շփոթությամբ»²⁷:

Որ հետազոտողի այստիկ յաւելումն է» վերապահումը միանգամայն տեղին է, հաստատվում է վերևում վկայակոչված Մաշտոցի անվան Մատենադարանի № 469 գրչագրի օրինակով, ուր ձիակ ըստ հայոսմ ՄԻԱ-ն Ստեփանոս գրչի ձեռքով ավելացվել է լուսանցքում և միայն հետագա ընդօրինակություններում է մուծվել բնագիր և այդ եղանակով դարձել հիշատակարանի մաս:

Ինչ վերաբերում է նմանացու և Նյուսացու հիշյալ աշխատանքների՝ Ստ. Սյունեցու թարգմանության ժամանակին, ապա պիտի նկատել, որ հետազոտողները, չնչին բացառությամբ, համամիտ են Հ. Տաշյանի այն եզրակացությանը, թէ 716 կամ 717 թուականն է միայն ուղիղն՝ այն ստույգ է»²⁸:

Ուրող տարակարծություններ կան թարգմանիչների կատարած դերի շուրջ: Այսպես, օրինակ, նշված հիշատակարանի մի հրատարակված տարբերակի առիթով, Ստ. Սյունեցու կապակցությամբ ծանուցվում է. «այլ խնդրել է թէ արդեօք ինքնի՞ն իցէ թարգմանիչն թէ լոկ սրբագրող կամ յարդարող թարգմանութեանն յիշատակելոյն ի նմանէ Դաւթի հիւպատոսի...»²⁹: Առաջադրվող կասկածը, ավելի ճիշտ՝ կատարված աշխատանքի նման բաժանումը իրականում որևէ արդարացում չունի: Նախ պիտի ասել, որ բուն սկզբնաղբյուրը՝ թարգմանական հիշատակարանը, նման հետևության հնարավորություն չի տալիս, ուր շատ հստակ ասված է, որ թարգմանեցան դիրքս... ի

²⁴ ՄՄ, ձեռ. № 1500, էջ 602ա, ձեռ. № 620, էջ 150ա, ձեռ. 1828, էջ 292ա-բ և այլն: Մ. Չամչյանի հրատարակության հիմք ձեռագրում ՄԻԱ-ի փոխարեն եղել է ՃԿԵ (տե՛ս Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 555):

²⁵ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 555:

²⁶ Յ. Տաշյան, Մատենադարան մանր ուսումնասիրությունը, էջ 9:

²⁷ Հիշատակարանը ձեռագրաց, էջ 55, հմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժԲ դգ., էջ 26, ծան. 1:

²⁸ Տե՛ս Յ. Տաշյան, Մատենադարան մանր ուսումնասիրությունը..., էջ 10, հմտ. Մ. Գ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրուք-Լիբանան, 1958, էջ 32:

²⁹ Նե մ ե ս ի ո ս ի փ ի լ ի ս փ ա յ ի է մ ե ս ա ց լ ո յ Յ ա ղ ա գ ս բ ն ո թ ե ա ն մ ար դ ո յ, էջ 162, ծան. 2:

ձեռն Դավթի հիպատոսի... և ի ձեռն Ստեփաննոսի քահանայի»։ Ստացվում է այն թյուր տպավորությունը, որ թարգմանիչ կատարողների հիշատակվող հերթակարգով պիտի առաջնորդվել և նախապատվությունը Դավթի հիպատոսին վերապահել, որովհետև բուն հիշատակարանում առաջինը նրա անունն է տրվում։ Աշխատանքի նման ձևական բաժանումը որևէ կերպ չի արդարանում և ինքնին մերժելի է։ Մինչդեռ պիտի մտածել, որ թարգմանական հիշատակարանի հեղինակը հասկանալի պատճառով առաջինը գործընկերոջ անունն է տալիս, մանավանդ որ վերջինս սլաշտոնակա անձ է։

Բացի արդ՝ եղած ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրները Ստեփանոս Սյունեցի թարգմանիչ-մատենագրի մասին միանգամայն դավատանքով են խոսում և ոչ մի առիթով նրան արագորոգ-հարգարողի օժանդակ դեր չի վերապահվում։ Այնպես որ Նյութագրու թարգմանիչներ պիտի ընդունել հավասարապես թե՛ Դավթի հիպատոսին և թե՛ Ստեփանոս Սյունեցուն։

Տվյալ պարագայում էական նշանակություն ունի նրանց կատարած թարգմանությունների շրջանակների ճշգրտումը։ Ասվեց, որ նշված թարգմանական հիշատակարանը գրվել է «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքների թարգմանության առիթով։ Միաժամանակ հայտնի է, որ Գր. Նյութագրու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկից երկու ընդարձակ հատված կա VI դ. վերջին և VII դ. սկզբին կազմված «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմում³⁰։ Տվյալ դեպքում երկու տրամաբանական հետևություն կարելի է անել։ Մեկ այն, որ «Կնիք հաւատոյ» ժողովածուի պարունակած թարգմանությունները բոլորովին օտար թարգմանի աշխատանք են և, հասկանալի է, ընդհանրական չեն ձեռագրերով պահպանված թարգմանության հետ։ Նվ երկրորդ հնարավոր ենթադրությունն այն է, որ միջնադարում Ստ. Սյունեցու և Դավթի հիպատոսի հայտնի թարգմանության առանձին հատվածներ հետագայում են մուծվել «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ։ Այլապես անհասկանալի կմնա VIII դ. թարգմանության հայտնությունը Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (մահ. 628 թ.) օրոք կազմված ժողովածուի էջերում։

Բոլոր պարագաներում հարցի համեմատաբար սուույգ պատասխանը հնարավոր է ստանալ հոսպարակված հատվածների և մեկ-երկու ձեռագիր տարբերակի համեմատության եղանակով։ Այդ նպատակով ընտրել ենք «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի ամբողջական ընդօրինակությունների երկու տարբերակ, որոնցից մեկի՝ № 468-ի համեմատության արդյունքներն արտացոլվել են բուն տեքստում, մյուսին՝ № 469-ի տարբերակները տողատակում, աչլընթերցումների տեսքով։ Արդ՝ հետևենք համեմատությանը ընթացքին։

Երանելոյն Գրիգորի, եղբօրն
Բարսղի, որ առ յարութիւնս
Կնիք հաւատոյ... (էջ 267—276)

Գրիգորի եղիսկապոսի, եղբաւրն
Բարսղի, Տեսութիւն ի մարդոյն
կազմութիւնն...

(ՄՄ ձեռ. № 468³¹ «Ժողովածու»
ԺԲ-ԺԳ դդ., էջ 1ա—115բ)

- 1 մարմինն (էջ 267)
- 2 բանն
- 3 անկարելի
- 4 այսպիսոյ
- 5 մեծարասցութ
- 6 ի քննաբարոզին
- 7 ասացելոցն

- մարմինան
- բան
- անկարել (էջ 78ա)
- այսպիսին
- մեծարասցէ
- ինքն զքարոզին
- իսկ ասացելոցն

³⁰ Կնիք հաւատոյ..., էջ 267—276, 289—293։

³¹ Տողատակի անթվակիր տարբերակները երկու դեպքում էլ՝ այս և հաջորդ համեմատության համար, արդյունք են № 469 գրչագրի ունեցած տարբերությանը։

8 զանազանս աւարտեաց	ամենազանս առադրեաց բանս
9 զի	քանզի
10 սոքաւք	նոքաւք
11 իսկ	իսկ ապա
12 զի	իբրու զի
13 այնց զի	նոցա թէ
14 բանն	բանս
15 յիսկզբանն	ի սկզբան
16 անգ	անդի
17 Երուսաղէմացոց	Երուսաղէմացոց
18 որպիսի	որպիսի պարիսպքն
19 որ և արժանի զարմանալոյ եղև աշակերտացն Տեառն (էջ 268)	որ և աշակերտացն Տեառն արժանի զարմանալոյ համարեալ եղև
20 զՏէրն	զՏէր
21 պատմումն	պատմութիւն
22 յայտ առնելով ասէ	յայտնէ ասելով առ նա
23 գործք	գործքս
24 շինուածն	շինուածքս
25 զաւերումն՝ զապականումն	զաւերութիւն և զապականութիւն
26 առժամայն	առ այնժամ
27 միոյ (էջ 269)	մի (էջ 279ա)

Այսպիսի տեսք ունեն հրատարակված երկրորդ հատվածի և գրչագիր օրինակների տարբերությունները:

Երանելոյն Գրիգորի Նիսացոյ, եղ- ՄՄ., ձեռ. № 468, էջ 58բ—59 բ
թոր Բարսղի, Յաղագս՝ անասնական
ի մեզ ախտի առի ի յանասնական
բնութիւն ազգակցութեան պատմառ
ունին:

Կնիք հաւառոյ..., էջ 289—293

1 ի սկզբանէ	ի սկզբանէս
2 զիւրաքանչիւր	զիւրաքանչիւրն
3 յսկզբերէ	յազբերէ
4 ախտից	ախտիցն (էջ 58բ)
5 ընդ	ըստ
6 տրամադրութեան	տրամադրութեանն
7 վկայիլ	վկայել
8 անասնոց	անասնոցն
9 պատճառանաց	պատճառացն

1 մարմինսն (էջ 172բ) դատիցի] դատեսցի. 2 բան. 3 անկարել. ոչ] ոչ է. 4 այսպիսին. 5 մեծարացէ. 6 ինքն զքարոզին. 7 իսկ ասացելոցն. 8 ամենազանս առադրեաց բանս. 9 քանզի. իորձն] իորձ. 10 նոքաւք. ասացուածս] արացուածն. 11 իսկ ապա. յառաջն] յառաջագոյն. ասացելոցն] ասացելոց. 12 իբրու զի. 13 նոցա թէ.

14 բանս (էջ 173ա) 15 ի սկզբան. 16 անդի. 17 Երուսաղէմացոց. 18 որպիսի պարիսպքն. աշտարակքն. 19 որ և աշակերտացն Տեառն արժանի զարմանալոյ համարեալ եղև. հաւել. 21 զՏէր. զերեւելիսն. 22 պատմութիւն. 23 յայտնէ ասելով առ նա. 23 գործքս. որպիսի] և որպիսի. 24 շինուածքս. 26 զաւերութիւնն և զապականութիւն. 27 առ այնժամ. 28 մի (էջ 173բ):

1 ի սկզբանէս. 2 զիւրաքանչիւրն. 3. յազբերէ. յորդեալ] յորդել. 4 ախտիցն. մարդկային] մարդկային. 5 ըստ. 7 վկայել. սկզբունսն] սկզբունս. 8 անասնոցն. 9 պատճառանացն. 10 յանտուտն. 12 ձեռնդեանն (էջ 159ա) 14 աւելին. 15 ատելութիւն. 16 այսպիսիքս. 17 յաստուածավանդու. մարդկային] մարդկային. 18 բնութիւն. 19 ինքեանն. 20 մարդկայինն (էջ 159 բ):

10 յանդունդս	յանտուստն
11 մարդն	մարդ
12 ծննդեան	ծննդեանն
13 ցանկութեանն	ցանդութեանն
14 յաւելից	աւելին
15 սիրոյ ատելութիւն	ատելութիւն
16 աշխարհք	աշխարհքս
17 յաստուածային	յաստուածավայելուչ
18 բնութիւնս	բնութիւնն
19 ինքեան	ինքեանն (էջ 59ա)
20 մարդկային (էջ 289)	մարդկայինն (էջ 59բ)

Այսպիսով, երկու դեպքում էլ համեմատությունների ընթացքը կարելի է շարունակել, սակայն պարզորոշ երևում է, որ արդյունքը մնալու է նույնը այն պատճառով, որ տպագիր հատվածների և համեմատվող ձեռագրերի ունեցած տարբերությունները էական, արմատական չեն և վստահությամբ կարելի է ասել, որ ընդօրինակման ճանապարհով պայմանավորված ստորոնթերցումների շրջանակներից դուրս չեն գալիս, այսինքն գրչական են և ոչ թարգմանական: Ասվածից հետևում է, որ «Յաղագս կազմութեան մարդոյ» երկասիրության երկրորդ, զուգահեռ թարգմանություն ենթադրելու հիմքեր չկան: Փաստորեն «Կնիք հաւատոյ»-ի տպագիր հատվածները եղած միակ ամբողջական թարգմանությունից են քաղվել և, բնականաբար, «նոքա ընին կարող է դարի սկզբում կազմուած ժողովածոսի մէջ գտնուել, ալ պէտք է յետոյ աւելացուած լինին»³²:

Գրիգոր Նյութագու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակի առումով ուշագրավ է նաև նույն ժողովածուում պահպանված երկու ալլ հատվածների առկայության փաստը³³, որը ինքնին հնարավորություն է տալիս մտածելու, որ, այնուամենայնիվ, «Կնիք հաւատոյ»-ի նյութերի հավաքման-դասղասման շրջանում կային բյուզանդական մատենագրի առանձին ճառերի պատրաստի կամ ընթացիկ թարգմանություններ, որոնք նյութով ու բովանդակությամբ միանգամայն հարմար էին նկատվում ոչ միայն որոշակի գործնական նպատակով կազմվող ժողովածուի դասանական բնույթին ու առաջադրվող պահանջներին, այլ նաև կազմողի ճաշակին ու հետաքրքրություններին և այդ իսկ պատճառով ընդգրկվում էին ժողովածուի կազմում:

Բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությունների ժամանակի իմաստով նույնքան օգտակար կարող է լինել նաև VIII դ. կազմված «Գիրք թղթոց» ժողովածոն, ուր զանազան պատասխան թղթերի առիթով, «որպէս վկայեաց երանելին Գրիգոր Նիսեայ», «որպէս և Գրիգոր Նիսեայ ասէ» և նման ձևակերպումների տակ հաճախ վկայակոչվում են Նյութագու դավանական խնդիրներ արծարծող որոշ գործեր: Այսպես, օրինակ, Սահակ Պարթևի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» ձեռագրում ընդարձակ քաղումներ կան Գր. Նյութագու և Բ. Կեսարացու աշխատասիրություն համարվող, խրմբագրություններով տարածված «Հարցմունք և պատասխանիք» աշխատանքից: «Գիրք թղթոց»-ում պահպանված մեծ ու փոքր քաղումները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ «Կնիք հաւատոյ»-ի թվանդակած թարգմանություններից քացի, մեզանում, VIII դ. կային բյուզանդական մատենագրի գործերի ուրիշ թարգմանություններ ևս, որոնք և հղվում կամ վկայակոչվում էին եկեղեցական-պաշտոնական թղթակցություններ վարելիս: Ան-

³² Կնիք հաւատոյ..., էջ XIX:

³³ Նույն տեղում, էջ 24—25՝ Երանելուն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, եղբայր Բարսղի՝ Յերրորդութիւնն, էջ 348՝ Երանելուն Գրիգորի Նիւսացւոյ՝ Առի մարդանալն Տեառն:

շուշտ, չի բացառվում նաև ընթացիկ թարգմանությունների հնարավորությունը, մանավանդ որ գործին առնչվող անձինք ժամանակի դիրքում գրականության ընթացքը հովանավորող պետական, եկեղեցական անվանի գործիչներ էին:

Կր. Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակի ու միջավայրի հստակման առումով էական նշանակություն կարող են ունենալ այդ գործերի հայոց ինքնուրույն մատենագրության հետ ունեցած առնչակցության, թողած հետքերի բացահայտումն ու քննությունը: Հայտնի է, որ Մ. Խորենացին ծանոթ է եղել Գր. Նյուսացու «Ի Մելիտոս հպիսկոպոս...» ճառերի մանկանցն Բեթղեմի ի Հերովդէէ» և «Ի Մելիտոս հպիսկոպոս...» ճառերի հայերեն թարգմանություններին և օգտվել է դրանցից: Նշված երկրորդ հուշարձանի և Խորենացու Հայոց պատմության առանձին հատվածների մեր ձեռքի տակ եղած նմանության օրինակները հնարավորություն են տալիս ասելու, որ Խորենացու Պատմության դրույթյան ժամանակահատվածում (474 թ.), հայերեն թարգմանությամբ կար «Ի Մելիտոս հպիսկոպոս...» ճառը, որից և երբեմն բառացի քաղումների տեսքով, հաճախ էլ վերապատմելու եղանակով օգտվում էր Մովսես Խորենացին³⁴:

Հայագիտությանը ծանոթ է Նյուսացի-Խորենացի առնչակցության մեկ այլ փաստ ևս: Խոսքը բյուզանդական մատենագրի «Դրուատ ի սուրբն Ստեփանոս՝ նախավկայն Աստուծոյ» ճառի հայերեն թարգմանության և Խորենացու Պատմության ընդհանրության մասին է, «որուն վերջաբանը փոխ առած է Մ. Խորենացի Ս. Հովսեփմեայ ներբողանին մէջ»³⁵:

К ВОПРОСУ ОБ АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ ГР. НИССКОГО

К. М. МУРАДЯН

Резюме

Исследование армянских переводов литературного наследия Гр. Нисского представляет большой интерес с историко-культурной и текстологической точек зрения. Изучение переводов Нисского означает также определение сферы влияния позднесантичной и ранневизантийской культуры, выявление и освещение греко-армянских литературных связей. К сожалению, о переводчиках и переводах византийского автора сохранилось мало сведений. Переводами трудов Нисского занимались Ст. Сюнеци, переводчик Давид и другие представители древнеармянской литературы.

³⁴ Կ. Մ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս հպիսկոպոս՝ Անտիոքացի» ճառի հայերեն թարգմանությունը և Մովսես Խորենացին (տե՛ս Պատմա-բանասիրական հանգանակներ, 1987, № 2, էջ 139—149):

³⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի: Վննետիկ, հ. Բ, յօրինեց Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 230: